Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ս.թ. սեպտեմբերի 1-2-ը «Դոմ Մոսկվի» Երևանում մոսկովյան մշակութագործարարական կենտրոնը Հայաստանի շախմատի ակադեմիայի հետ համատեղ կազմակերպում է շախմատի կայծակնային մրցաշար՝ նվիրված Մոսկվայի օրվան:
Մրցաշարի **կիսաեզրափակիչ փուլը** տեղի կունենա Հայաստանի շախմատի ակադեմիայում (ք. Երևան, Շևչենկո 34), իսկ **եզրափակիչ փուլը**՝ «Դոմ Մոսկվի» Երևանում մոսկովյան մշակութագործարարական կենտրոնում (ք. Երևան, Արգիշտի 7):

Մասնակիցներ

Կիսաեզրափակիչ մրցաշարին կարող են մասնակցել առնվազն երրորդ շախմատային կարգ ունեցողները:
Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով՝ համաձայն ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների:

Կիսաեզրափակիչ մրցաշարում 1-6-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցները անցնում են եզրափակիչ փուլ:

Եզրափակիչ փուլը անցկացվում է շրջանային մրցակարգով 14 մասնակիցների միջև:

Միջազգային գրոսմայստերները իրավունք ունեն մասնակցելու միանգամից եզրափակիչ փուլին:

Ժամանակացույց

1 սեպտեմբեր – 16:00
2 սեպտեմբեր – 12:00

Ժամակարգ

3 րոպե ամբողջ պարտիայի համար՝ յուրաքանչյուր քայլի համար 2 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Կիսաեզրափակիչ մրցաշարի լրացուցիչ ցուցանիշներ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակային տեղերը կորոշվեն ըստ՝

ա) հատված Բուխհոլցի (-1) գործակցի,

բ) Բուխհոլցի գործակց,

գ) անձնական հանդիպման արդյունքի (գործում է միայն այն դեպքում, երբ հավասար միավորներ վաստակած բոլոր մասնակիցները խաղացել են միմյանց դեմ)

դ) սևերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,

ե) հաղթանակների առավելագույն քանակի:

Մրցանակային ֆոնդ

Մրցանակային ֆոնդը կազմում է 500 000 ՀՀ դրամ:

Մրցաշարի կիսաեզրափակիչ փուլի մրցանակային ֆոնդը 200 000 դրամ է:

Մրցաշարի եզրափակիչ փուլի մրցանակային ֆոնդը 300 000 դրամ է:

Մրցանակակիրները կպարգևատրվեն նաև գավաթներով, մեդալներով և դիպլոմներով:

Կիսաեզրափակիչ մրցաշարի մրցանակներ	**I**	**II**	**III**	**IV**	**V**
Հիմնական	50 000	30 000	20 000	15 000	15 000
Հատուկ մրցանակներ					
Լավագույն արդյունք ցույց տված շախմատիստուհի					10 000
Լավագույն արդյունք ցույց տված մինչև 12 տարեկան մասնակից					10 000
Լավագույն արդյունք ցույց տված մինչև 12 տարեկան աղջիկ մասնակից					10 000
Լավագույն արդյունք ցույց տված մինչև 10 տարեկան մասնակից					5 000
Լավագույն արդյունք ցույց տված մինչև 10 տարեկան աղջիկ մասնակից					5 000
Լավագույն արդյունք ցույց տված մինչև 8 տարեկան մասնակից					5 000
Լավագույն արդյունք ցույց տված I որակավորման կարգի մասնակից					5 000
Լավագույն արդյունք ցույց տված II որակավորման կարգի մասնակից					5 000
Լավագույն արդյունք ցույց տված III որակավորման կարգի մասնակից					5 000
Լավագույն արդյունք ցույց տված օտարերկրյա մասնակից					10 000

Եզրափակիչ մրցաշարի մրցանակներ	**I**	**II**	**III**	**IV**	**V**	**VI**
Հիմնական	85 000	65 000	50 000	40 000	30 000	30 000

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու միայն մեկ մրցանակ:

ԿԱՅԾԱԿՆԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐ՝
ՆՎԻՐՎԱԾ ՄՈՍԿՎԱՅԻ ՕՐՎԱՆ

Մուտքավճար

Կիսաեզրափակիչ մրցաշարում միջազգային գրոսմայստերները չեն կարող մասնակցել:

Կոչում/գործակից	Մուտքավճար
ՄՎ,ԿՄԳ,ԿՄՎ, ՖՎ	անվճար
Վարկանիշ, շախմատային առաջին կարգ ունեցողներ	2 000 ՀՀ դրամ
Շախմատային երկրորդ և երրորդ կարգ ունեցողներ	3 000 ՀՀ դրամ

Մրցաշարի գրանցման վերջնաժամկետն է **ս.թ. օգոստոսի 31-ը, ժամը 18:00:**
Գրանցման համար սեղմել հետևյալ հղումը՝
https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSdeQDBP0LVpYjP9CINi_RdFSYB58Ey8XYbnH_dHuX86AfjIKA/viewform?usp=sf_link

Հասցե՝ Շևչենկո 34, ք. Երևան, 0050, ՀՀ
Էլ. հասցե՝ info@hessacademy.am

Հեռ.՝ +374 10 44 84 79
Բջջ.՝ +374 77 44 84 73